



122. ԾԳՆԱՎՈՐ ՈՒ ԶԱՂՋՊԱՆ

Ճգնավոր մե մըջ ուր մտքին կըսեր.

— Քառսուն տարի կը ճգնիմ, պաս կը պահիմ, աղոթք կէնիմ, արտըսունք կը թափիմ, իմ թախմընով ընծի հափսար, յան ընծնե յեվելի մարդ չկա մըջ ախշըրքին:

Աստված մըջ էրդին ճգնավորին յիմցուց.

— Քըղի դըռ շա՛տ բան պետք է, օր հասնիս ֆլան ջաղջըպնին:

Ճգնավոր գեղնա կէրթա ղջաղջըպան կը գտնա: Ջաղջըպան ճգնավորին կը պատվե, կը նստին ժղիլ կէնին շուրի յիրկուն, յիրկուն օր կէղնի, շափուկ մե լիք ջրով՝ կը կախե յառքեն, կնկան լե թանրի կէնե, օր դուրանց տեղ թալե շափկի տակ, ջաղջըպան ու կնիկ ղճգնավոր կառնին մըջ ուրանց, կը պառկին:

Կես գիշեր օր կէղնի, ճգնավորի միտք կը փոխվի, դոտք գերկընցու մըջ կնկա ճվերուն, հըտ յեռին ջուր կը շոշոա վըր ճգնավորին: Ջաղջըպան կը բոռա.

— Ճգնավո՛ր, միտքդի մը՛ ծռի:

Ճգնավոր դոտք կը քաշե:

Շարի լուս ճգնավոր տաս հեղ զուր միտք կը ծռե, տաս հեղ լե կը շոշոա վըր ուրին: Լուս օր կը բացվի, գեղնան, ճգնավոր ամոթու զգլուփ կը կախե, կը նստի մեկ դեն:

Ջաղջըպան կըսե.

— Ծգնավոր, իդա քառսուն տարի է, օր ես ու իմ կնիկ քուր-ախ-
պոր պես կապրինք հրա յիրարու: Չըմքի օր մեկ անգամ իմ կնիկ
ընծի ըսեր է «ախպեր», ես լե ուրին ըսեր իմ «քուր»:

Ծգնավոր ամոթով կը դառնա ուր տեղ ու մտքի մեջ կըսե.

— Հա՛խ աստված, ընծի շա՛տ բան ուետք է, օր ես ջաղջրպնին
հասնիմ:

